

ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ



Իրականացնել նոր համատեղ ծրագրեր

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն ընդունել է ՄԱԿ-ի պարենի և գյուղատնտեսության կազմակերպության (FAO) Կենտրոնական և Արևելյան Եվրոպայի տարածաշրջանային ներկայացուցչի տեղակալ, Հայաստանում ՊԳԿ-ի ներկայացուցիչ Անտոնիո Ալունգինի:

Ընդգծելով ՊԳԿ-ի կողմից Հայաստանում իրականացվող ծրագրերի արդյունավետությունը՝ նախարարը հույս է հայտնել, որ դրանք կունենան շարունակական բնույթ՝ ներառելով գյուղատնտեսական այլ ճյուղեր ևս: «Առաջիկայում մենք նպատակ ունենք ընդլայնել ՊԳԿ-ի հետ համագործակցության շրջանակները և իրականացնել նոր համատեղ ծրագրեր՝ ելնելով ՀՀ գյուղատնտեսության ոլորտի առաջնահերթություններից», - նշել է նախարարը:

Ս. Կարապետյանը, մասնավորապես, կարևորել է հակակարկտային ցանցերի, ոռոգման նորագույն համակարգերի, ձկնաբուծության ոլորտում օգտագործվող ջրի խնայողատար տեխնոլոգիաների ներդրման, անասնապահության ոլորտում գյուղատնտեսական կենդանիների հաշվառման և համարակալման անհրաժեշտությունը: Անտոնիո Ալունգին տեղեկացրել է, որ մոտ ապագայում Հայաստանում, ձկնաբուծության ոլորտում, նախատեսվում է իրականացնել փորձնական ծրագիր:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ

Հիմնվել է ընկուզենու այգի

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանն այցելել է Կոտայքի մարզի Եղվարդ համայնք, որտեղ մասնակցել է լիբանանյան Gardenia Lebanese Farms L.L.C. Pecan Farms ընկերության կողմից իրականացվող ընկուզենու այգիների հիմնման պաշտոնական մեկնարկի արարողությանը:

Ողջունելով հյուրերին՝ նախարարը նախ շնորհակալություն է հայտնել ծրագրի հեղինակներին և աջակիցներին՝ նման կարևոր նախաձեռնության համար: «Բարձր եմ գնահատում այս ծրագրի իրականացումը, քանի որ այն նոր համագործակցություն է երկու երկրների գյուղատնտեսության ոլորտներում, որի շրջանակում Եղվարդ համայնքում հիմնվել է պեկան տեսակի ընկուզենու այգի, որն իր տեսակով միակն է հանրապետությունում», - նշել է ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը:

Նախարարի խոսքով՝ ընկերությունն անցյալ տարի ցանկություն էր հայտնել Հայաստանում այգիներ հիմնել. այդ նպատակով Եղվարդում գնել էր 100 հեկտար անմշակ հող և այսօր արդեն 22 հեկտար տարածքի վրա հիմնել է ընկուզենու այգիներ: Այգիներում ներդրվել է կաթիլային ոռոգման համակարգ, նախատեսվում է նաև հետագայում կարկտապաշտպան ցանցեր տեղադրել:

«Ես ամենայն պատասխանատվությամբ հայտարարում եմ, որ 6 տարվա ընթացքում Հայաստանն իր պատվավոր տեղը կունենա պեկան տեսակի ընկուզի արտադրության աշխարհի քարտեզի վրա», - նշել է Gardenia Lebanese Farms L.L.C. ընկերության գլխավոր տնօրեն Նիկոլա Աբու Ֆայալը: Նրա խոսքով՝ ընկերության կողմից իրականացվող ծրագրերի եկամուտները կմասն Հայաստանում», - հավելել է Նիկոլա Աբու Ֆայալը:

Նշենք, որ Լիբանանի Gardenia Lebanese Farms L.L.C. ժամանակակից սննդի արտադրության ընկերությունը տարածաշրջանի ամենամեծ և հայտնի ընկերություններից մեկն է, և իր արտադրանքն արտահանում է աշխարհի ավելի քան 43 երկրներ: Այժմ Gardenia Grain D'Or ապրանքանիշը համարվում է Մերձավոր Արևելքի առաջատար ապրանքանիշերից մեկը:

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

Համալիրի հիմնական ուղղվածությունը կաթի արտադրությունն է

ՀՀ Նախագահ Սերժ Սարգսյանն աշխատանքային այցով մեկնել է Վայոց ձորի մարզ: Նախագահը ներկա է գտնվել Գնդեվազ համայնքում գործող «ԷկոՖարմ» ՍՊԸ-ի բացման արարողությանը: Անասնապահական այս համալիրը՝ նախատեսված խոշոր եղջերավոր կենդանիների բուծման, կաթի և պանրի արտադրության համար, հիմնադրվել է 2013թ. սեպտեմբերին:

Շինարարական աշխատանքներն ընկերությունում ավարտվել են 2014թ. դեկտեմբերին: Համալիրը հիմնականում ունի կաթի արտադրության ուղղվածություն: Այս նպատակով այստեղ բուծվում են Գերմանիայից ներկրված տոհմային կաթնամսատու երինջներ: Ընկերության մոտ 300 գլուխ տոհմային խոշոր եղջերավոր կենդանիներից պլանավորվում է տարեկան ստանալ մինչև 1.16 մլն լ կաթ:

Նորաբաց համալիրը նախագծված է սննդի անվտանգության միջազգային ստանդարտի պահանջներին համապատասխան և իր տեխնիկական հագեցվածությամբ չի զիջում եվրոպական որակի և կառավարման չափորոշիչներին: Համալիրն ունի 15 մշտական և 45 սեզոնային աշխատողներ, որոնց միջին աշխատավարձը կազմում է 100-120 հազ. դրամ:

Գինեգործության ոլորտի զարգացում

Վարչապետ Հովիկ Աբրահամյանն այցելել է Պոռչյանի կոնյակի գործարան:

Կառավարության ղեկավարը շրջայց է կատարել գործարանի տարածքում, ծանոթացել արտադրական հնարավորություններին, արտահանման ծավալին, ընթացիկ ծրագրերին և ընդլայնման հեռանկարներին: Շրջայցից հետո, վարչապետ Աբրահամյանի գլխավորությամբ տեղի է ունեցել Հայաստանում գինեգործության ոլորտի զարգացման հնարավորություններին ու հեռանկարներին նվիրված խորհրդակցություն, որին մասնակցել են գինեգործական ընկերությունների ներկայացուցիչները:

Ողջունելով ներկաներին՝ կառավարության ղեկավարը կարևորել է նման ձևաչափով քննարկումները, քանի որ դրանք հնարավորություն են տալիս վերհանել առկա խնդիրները և քննարկել դրանց լուծման փոխընդունելի տարբերակներ: «Կառավարությունը շահագրգռված է գինեգործության, խաղողագործության, կոնյակագործության զարգացման, արտադրական և արտահանման ծավալների ավելացման հարցում և պատրաստ է հնարավորինս աջակցել ցանկացած ողջամիտ առաջարկության», - նշել է վարչապետը: Գինեգործական ընկերությունների ներկայացուցիչները շնորհակալություն են հայտնել ՀՀ կառավարությանը՝ ոլորտին ցուցաբերվող աջակցության համար և ներկայացրել իրենց հուզող խնդիրները: Տնտեսվարողները, մասնավորապես, բարձրացրել են հարկային և մաքսային վարչարարության պարզեցմանը, օրենսդրական դաշտի բարելավմանը, խաղողի մթերմանը, տեղական և արտասահմանյան նոր տեսակների աճեցմանը, արտերկրում ցուցահանդեսների կազմակերպմանը վերաբերող հարցեր, ինչպես նաև այլ խնդիրներ:

Ամփոփելով քննարկման արդյունքները՝ վարչապետը նշել է, որ հետևողական է լինելու տնտեսվարողների բարձրացրած յուրաքանչյուր օբյեկտիվ խնդրի լուծմանը և արհեստական խոչընդոտների վերացմանը: Այս առնչությամբ Հովիկ Աբրահամյանը հանձնարարականներ է տվել պատասխանատու գերատեսչությունների ղեկավարներին:

Կառավարության ղեկավարը հորդորել է տնտեսվարողներին քննարկված հարցերն ու առաջարկությունները ներկայացնել գյուղատնտեսության նախարարություն և ավտոմատ համագործակցել շահագրգիռ նախարարությունների հետ:

Շրագիրը դեռևս նախագծա-նախահաշվային փուլում է	Էջ 3
Մերձավանում խնդիրները լուծելի են	Էջ 5
Մասնագետի խորհուրդ	Էջ 7

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ

ՀՀ կառավարությունում

Կառավարության որոշմամբ «Յազարամյակի մարտահրավեր հիմնադրամ-Յայաստան» ծրագրով վերականգնված ոռոգման մայր ջրանցքները, պոմպակայանները, երրորդ կարգի ջրանցքները և Արարատյան դաշտի դրենաժային համակարգը համապատասխան ձևակերպումներով հանձնվելու են ըստ պատկանելիության՝ դրանց պատշաճ շահագործումն ապահովելու համար:

ՍԵՐՍՆԱՐՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ընթացիկ տարում կավելանան կարտոֆիլի ցանքատարածությունները

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը և Յայաստանի «Ագրարագյուղացիական միավորում» ՀԿ նախագահ Յրաչ Բերբերյանն օրերս այցելել են Կոտայքի մարզում գտնվող «Ֆիրմա Նյու» մաքսային տերմինալ՝ ՀՀ գյուղատնտեսության նախարարության աջակցությամբ, Յայաստանի ագրարագյուղացիական միավորման կողմից ներկրված հողանդական կարտոֆիլի տնկանյութը դիտարկելու նպատակով:

«Սա Նիդերլանդներից Յայաստան ներկրված Սիլվանա սորտի կարտոֆիլի սերմացուի վերջին խմբաքանակն է, որը մեկ հեկտարից մինչև 80 տոննա բերք է ապահովում: Ըստ կանխատեսումների՝ կարտոֆիլի ցանքատարածությունները ընթացիկ տարում 1000-1200 հեկտարով կավելանան, համապատասխանաբար կավելանա նաև համախառն բերքը»,- նշել է ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը: Նախարարը հավելել է, որ, ի հաշիվ ներկրվող տնկանյութի բարձր բերքատվության, 2010 թվականի համեմատությամբ, կարտոֆիլի ցանքատարածությունները, ընդհանուր առմամբ, ավելացել են 12 %-ով, իսկ համախառն բերքը՝ 40-50 %-ով: Արդյունքում հաջողվել է վերջին 3-4 տարիների ընթացքում բավարարել՝ ինչպես հանրապետության ներքին պահանջարկը, այնպես էլ մեծաքանակ արտահանումներ իրականացնել: Նախարարի խոսքով՝ այս տարի նախորդ տարվա համեմատությամբ, ավելի շատ տնկանյութ է ներկրվել՝ շուրջ 3000 տոննա, իսկ հանրապետությունում տարեկան, ընդհանուր առմամբ, օգտագործվում է 100-120 000 տոննա կարտոֆիլի սերմացու:



Իր հերթին Յրաչ Բերբերյանը նշել է, որ հանրապետությունում կարտոֆիլագործությունն արտահանման միտում ունեցող ճյուղ է և արտաքին շուկայում մեծ պահանջարկ ունի, ուստի ներկայումս նախարարության հետ համատեղ ինտենսիվ քննարկվում են բարձր բերքատու կարտոֆիլագործությունը զարգացնելու լրացուցիչ ծրագրեր:

ԵՂԱՆԱԿԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Ինչպիսին է լինելու եղանակը հունիսին



«Այս տարվա մայիս ամսին տեղումների քանակը եղել է նորմայից ավել: Ունեցել ենք 10 կարկտահարության դեպք: Հունիս ամիսը հանրապետության տարբեր հատվածներում տարբեր կերպ կդրսևորվի»,- նշել է ՏԿՄԻՆ հիդրոմետ ծառայության օդերևութաբանության կենտրոնի պետի տեղակալ, աշխարհագրական գիտությունների թեկնածու Գագիկ Սուրենյանը:

Արարատյան դաշտավայրում, Արմավիրի մարզում և Արագածոտնի նախալեռներում հունիսին միջին ջերմաստիճանը լինելու է 21-22 աստիճան, առավելագույնը՝ 32-34 աստիճան, իսկ նվազագույնը՝ 7-12 աստիճան տաքություն:

Շիրակի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում, Արագածոտնի մարզի լեռնային շրջաններում առաջիկա ամսին սպասվում է միջինը՝ 12-15 աստիճան, առավելագույնը՝ 23-26, նվազագույնը՝ գիշերը 2-5 աստիճան տաքություն: Լոռու մարզում սպասվում է միջինը 14-16 աստիճան, առավելագույնը՝ 24-27, նվազագույնը / գիշերը / 3-6 աստիճան տաքություն:

Տավուշի մարզում հունիս ամսին կդիտվի միջինը 15-19 աստիճան, առավելագույնը՝ 27-30, նվազագույնը՝ 5-8 աստիճան տաքություն: Վայոց ձորի մարզում սպասվում է միջինը 20-22 աստիճան, առավելագույնը՝ 32-34, նվազագույնը՝ 1-2 աստիճան տաքություն:

Սյունիքի մարզում կդիտվի միջինը 20-23 աստիճան, առավելագույնը՝ 32-35, նվազագույնը 7-11 աստիճան տաքություն:

Երևանում հունիս ամսին սպասվում է միջինը 21-22 աստիճան տաքություն: Ամսվա առաջին կեսին հնարավոր է ջերմաստիճանի նվազում /գիշերը/ մինչև 7-10 աստիճան: Առանձին օրերին կդիտվի ցերեկը մինչև 32-34 աստիճան տաքություն:

Ըստ Գագիկ Սուրենյանի, հունիսը ևս անկայուն ամիս է, քանի որ տեղումների քանակն ավելի մեծ է լինելու ամսվա առաջին կեսին: Կարկտահարություններ չի բացառվում մարզերում, որոնք գրեթե բոլոր տարիներին նկատվում են: Այս տարի մեզ չի սպասվում շոգ ամառ: Լինելու է ավելի մեղմ, քան նախորդ տարիներին:

ՊԱՅՔԱՐԻ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Սկսվել է ֆերոմոնային թակարդների տեղադրումը

ՀՀ գյուղատնտեսության նախարարի տեղակալ Գառնիկ Պետրոսյանն այցելել է Արարատի մարզ, որտեղ մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության, «Անասնաբուժասանիտարիայի, բուսասանիտարիայի ոլորտի ծառայությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի մասնագետների և բուսասանիտարական տեսչության տարածաշրջանային տեսուչների հետ հանդիպումների ընթացքում, քննարկվել են մորմագգի (լոլիկ, տաքդեղ, սմբուկ, կարտոֆիլ) մշակաբույսերի ցեցի դեմ պայքարի արդյունավետ միջոցառումների կազմակերպման խնդիրները:



Արարատի ԳԱՄԿ-ին տրամադրվել են մարզի համայնքներում առկա մորմագգի մշակաբույսերի ցանքատարածություններին համապատասխան քանակության ֆերոմոնային թակարդներ (3 հա-ի հաշվով՝ մեկ թակարդ) մոնիթորինգի իրականացման համար:

Փոխնախարարի կողմից ԳԱՄԿ-ի և ՊՈԱԿ-ի մասնագետներին հանձնարարվել է սահմանված ժամկետներում նշված մշակաբույսերի ցանքերում իրականացնել մշտադիտարկումներ և վնասատուի դեմ պայքարի միջոցառումների կազմակերպման ժամկետների վերաբերյալ իրազեկել հողօգտագործողներին, տրամադրել անհրաժեշտ մասնագիտական խորհրդատվություն: Արարատի մարզի համայնքներում դեռևս մայիսի 21-ից ընթացքի մեջ է մորմագգի մշակաբույսերի ցանքերում ֆերոմոնային թակարդների տեղադրումը:

ԱՑԱԿՅՈՒԹՅՈՒՆ

Խթանվում է քաղաքացիների մասնակցությունը համայնքների կառավարմանը

Օրերս Յայաստանի Ուրցաձոր, Վարդենիկ, Ախթալա և Արթիկ համայնքները Եվրոպայի խորհրդի հետ ստորագրեցին համաձայնագրեր՝ համայնքային իրատապ խնդիրները վեր հանելու և լուծումներ գտնելու հարցում քաղաքացիների մասնակցության նախաձեռնություններ իրականացնելու վերաբերյալ: Այս նպատակով համայնքներին կհատկացվի 5 հազարական եվրո դրամաշնորհ: Համաձայնագիրը ստորագրել են ԵՄ գրասենյակի ղեկավար Նատալյա Վուտովան և վերոնշյալ չորս համայնքների ղեկավարները:



Ծրագրի շրջանակում նշված համայնքներում կիրականացվեն նախաձեռնություններ՝ ուղղված համայնքային կյանքին բնակիչների մասնակցության ապահովմանը, մասնավորապես՝ համայնքային բյուջեի ձևավորման, բնապահպանական, էներգաարդյունավետության և համայնքային իրատապ այլ խնդիրների կարգավորման հարցերում: «Առաջին անգամ է, որ ԵՄ գրասենյակը Յայաստանում դրամաշնորհներ է տրամադրում՝ համայնքներում քաղաքացիների մասնակցության ապահովման համար: Հուսով եմ, որ այս փորձնական ծրագիրը հաջողություն կունենա: Մենք կաջակցենք, որ ծրագրի արդյունքները և քաղված դասերը փոխանցվեն նաև Յայաստանի մյուս համայնքներին»,- նշել է ԵՄ գրասենյակի ղեկավար Նատալյա Վուտովան:

ՀՀ ՏԿՄԻՆ աշխատակազմի տեղական ինքնակառավարման վարչության պետ Աշոտ Գիլոյանը կարևորեց ծրագիրը՝ նշելով, որ համայնքային խնդիրներին քաղաքացիների մասնակցությունը կխթանի տեղական ժողովրդավարության զարգացմանը և ՏԻՄ-երի կայացմանը: Ա. Գիլոյանը համայնքապետերին առաջարկել է, որպես մասնակցային ապահովման բաղադրիչ, կիրառել կարճ հաղորդագրությունների (sms) միջոցով համայնքային միկրոհարցումների անցկացման հնարավորությունը, ինչն արդեն կիրառվել է մի շարք այլ համայնքներում, և ապահովել ավագանու նիստերի առցանց հեռարձակումը:

Նշենք, որ ծրագիրն իրականացնում է ԵՄ Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսը՝ «Աջակցություն Յայաստանում տեղական ժողովրդավարության ամրապնդմանը» ծրագրի շրջանակում և Դանիայի կառավարության ֆինանսավորմամբ:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԱՅՅ

ՔՆՆԱՐԿՎԵԼ ԵՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՈԼՈՐՏԻ ՀԱՐՑԵՐ

Վերջերս, 33 տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարար Արմեն Երիցյանի, Գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանի, Էկոնոմիկայի նախարարի առաջին տեղակալ Գարեգին Մելքոնյանի և պաշտոնատար այլ անձանց ուղեկցությամբ աշխատանքային այցով Լոռու մարզում էր 33 վարչապետ Յուլիա Աբրահամյանը: Վարչապետին դիմավորել են մարզպետ Արթուր Նալբանդյանը և պաշտոնատար այլ անձինք, ապա ուղեկցել Սպիտակ քաղաքի վարչական տարածքում գործող «Ագրոհոլդինգ Արմենիա» ընկերություն: Վարչապետը մարզպետի և ուղեկցողների հետ շրջել է ընկերության տարածքում, ֆերմաներում, կովերի խնամքի և կթի բաժանմունքներում, որտեղ ընկերության տնօրեն Մ. Ազնավուրյանը ներկայացրել է կատարված աշխատանքներն ու ապագա ծրագրերը:



Ագրոհոլդինգը, որ անասնապահական արտադրության ժամանակակից ֆերմաներ է հիմնել ու զարգացրել Կոտայքի, Շիրակի և Լոռու մարզերում, մասնագիտացած է մսատու և կաթնատու խոշոր եղջերավոր անասունների բուծմամբ, ներկա պահին Սպիտակի անասնապահական համալիրում ունի բարձր մթերատու 300 գլուխ խոշոր եղջերավոր անասուն, որից՝ 100 գլուխը կովեր են: Օրական այստեղ արտադրվում է 2200 կիլոգրամ կաթ: Ընկերության տնօրենը ներկայացրել է, որ մոտ ապագայում նախատեսվում է անասնագլխաքանակի աճ /մինչև 400 գլուխ/, որը հիմնականում պետք է կատարվի՝ ի հաշիվ ֆրանսիական բարձր մթերատու գլխաքանակի ներկրման: Գյուղերը տեղեկացել են նաև, որ անասնապահությունից բացի, տնտեսությունը զբաղված է նաև աշխարհում տարածված հայկական գամփռ տեսակի շների բուծմամբ:

Այնուհետև կառավարության ղեկավարը Վանաձորի քաղաքապետարանում հանդիպել է Լոռու մարզի քաղաքային և գյուղական խոշոր համայնքների ղեկավարների և տնտեսավարողների հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել են տնտեսական ոլորտի խնդիրներին, բիզնեսի զարգացմանը, նոր ներդրումների ներգրավմանն առնչվող հարցեր: Դիմելով ներկաներին՝ վարչապետը նշել է, որ քննարկման նպատակն է՝ վեր հանել մարզում առկա խնդիրներն ու մտահոգող հարցերը, լսել տնտեսավարողների՝ կառավարությունից ունեցած ակնկալիքները, քննարկել կոնկրետ ծրագրեր: «Կառավարության նպատակն է՝ մարզերում, համայնքներում, քաղաքներում իրականացնել լրկալ ծրագրեր՝ այդպիսով լուծելով մեր քաղաքացիների՝ աշխատանքով ապահովման խնդիրը», - նշել է վարչապետը:

Քննարկման ընթացքում մասնակիցները ներկայացրել են հարցեր՝ շինարարության, գյուղատնտեսության, արդյունաբերության և այլ ներդրումային ծրագրերի վերաբերյալ: Վարչապետը հանձնարարել է համապատասխան գերատեսչություններին՝ քննարկել ներկայացված ծրագրերն ու ներկայացնել դրանց կյանքի կոչմանն ուղղված գործիքակազմ: Հանդիպման ավարտին՝ մարզպետը շնորհակալություն է հայտնել կառավարության ղեկավարին՝ Լոռու մարզ կատարած այցի և տնտեսավարողների ու համայնքների ղեկավարների հետ նման ձևաչափով հանդիպման համար:

ՀԻՄՆԱՆՆԴԻՐ

Ծրագիրը դեռևս նախագծանախահաշվային փուլում է

Նորիկ Մովսիսյանը, ով Արզակա-նի գյուղապետն է, (սկսած 2002թ.-ից անընդմեջ վերընտրվել է 4-րդ անգամ), քաջատեղյակ լինելով գյուղի բոլոր հոգսերին ու հիմնախնդիրներին, ամենամտահոգող հարցը համարում է խմելու և ոռոգման ջրի անկանոն մատակարարումը:

«Գարնանային այս ամիսներին խնդիրը փոքր ինչ մեղմանում է, քանի որ, առաջ տեղումների շնորհիվ, աղբյուրներում ջրի քանակությունն ավելանում է: Այդպիսով, ջրամբարներում կուտակված ջուրը հնարավոր է բնակիչներին մատակարարել շաբաթական 2 անգամ՝ 4-5 ժամով՝ նախկին 2 ժամի փոխարեն», - նշում է համայնքի ղեկավարը: Բնակիչները ստիպված այնքան ջուր են կուտակում տարողություններում, որպեսզի այն բավականացնի մինչև հաջորդ ջրամատակարարումը: Հանգստի գոտի և ամառանոցային համարվող Արզական այցելած հովիտների համար նույնպես նման իրավիճակում պայմանները նպաստավոր չեն: «Ինքս էլ համաձայն չեմ այդ իրողության հետ, քանի որ ջրով ապահովվածությունը յուրաքանչյուր մարդու իրավունքն է: Համայնքի բյուջեով հնարավոր չէ ջրամատակարարման խնդրին հիմնավոր լուծում տալ, քանի որ այն, առանց այդ էլ, դժվարությամբ է համալրվում: Այստեղ միայն պետական աջակցության ծրագիրը կարող է փոխել իրավիճակը, համաձայն որի, գյուղում պետք է տեղադրվեն ջրաչափեր և իրականացվի կենտրոնացված ջրամատակարարում», - նշում է գյուղապետը:

Ա ղ բ յ ու ը ը գտնվում են գյուղից 10-15 կմ հեռավորության վրա, խողովակաշարերով ջուրը հասնում է ջրամբարներ, այնուհետև՝ ջրատարարներով, մեծ կորուստներով, տեղափոխվում գյուղ: Ներդրումային ծրագրի արդյունքում, արգականցիներն ակնկալում են նաև դեռևս 60-ական թվականներին կառուցված ջրագծերի նորացում, իսկ ջրամբարներում՝ սանիտարահիգիենիկ պայմանների բարելավում: Սպասվում է նաև մաքուր ջրի շուրջօրյա ջրամատակարարում, ինչը հնարավոր է՝ ելնելով աղբյուրների քանակությունից:

Այդպիսով, կլուծվի նաև գյուղի վարչական տարածքում գտնվող հանգստյան տների և մասնավոր ամառանոցների ջրամատակարարման խնդիրը: Ռոռզման ջուրը նույնպես գյուղ է հասցվում զգալի կորուստներով, քանի որ այն մատակարարվում է բաց առուններով և մինչև Արզական հասնելը, օգտագործվում է նաև հարևան գյուղերի բնակիչների կողմից: Արդյունքում քիչ քանակությամբ ջուր է հասնում Արզականի հողօգտագործողներին: Մինչդեռ, հա-

մայնքը միշտ էլ աչքի է ընկել խնձորի ու տանձի մշակությամբ: Իրենց համայնի հատկանիշների շնորհիվ, դրանք ուրույն տեղ են գրավում հայաստանյան շուկայում: «Խնձորի կարգավորման դեպքում կավելանան այգետարածքները: Ընդհանրապես, սպասվում է, որ գյուղատնտեսական մշակության հողատարածքները կավելանան ավելի քան 150 հեկտարով: Գյուղում ապրող մարդը պետք է առկա ռեսուրսներով պահի իր ընտանիքը: Այստեղ աշխատատեղ ապահովում են սեփականաշնորհված և տնամերձ հողատարածքները: Գյուղացու եկամուտները գոյանում են նաև անասնապահական ծագման գյուղմթերքների իրացումից: Պետք է պայմաններ ստեղծվեն, որպեսզի գյուղացին մնա գյուղում և աշխատի, այլ ոչ թե գնա Երևան և ընդգրկվի շինարարական աշխատանքներում», - ասում է Նորիկ Մովսիսյանը: Նրա կարծիքով, գյուղերում պետք է այնպիսի ծրագրեր իրականացվեն, որպեսզի գյուղատնտեսական աշխատանքները շահութաբեր լինեն: «Տարիներ առաջ գյուղմթերքների գները ցածր էին, ինչի հետևանքով գյուղացու եկամուտը փոքր էր, հիմա գները բարձրացել են, մնում է պայ-



մաններ ապահովեն, որպեսզի գյուղացին վերադառնա այգեգործությանն ու բուսաբուծությանը: Բույսը, ծառը պետք է ջրվեն այնքան, որքան հարկավոր է, գյուղացին էլ պատրաստ է վճարելու դրա դիմաց», - հավելում է գյուղապետը:

Ինչ վերաբերում է ջրամատակարարման բարելավման ներդրումային ծրագրի ընթացքին, ապա, գյուղապետի տեղեկացմամբ, այն դեռևս նախագծա-նախահաշվային փուլում է, իսկ առաջիկայում կհայտարարվի շինարարական աշխատանքների իրականացման մրցույթ: Ի դեպ, օրհասական այս խնդրի լուծմամբ վերջնականապես կկարգավորվի նաև գյուղի կոյուղաջրերի հեռացման գործընթացը:

Նելլի Սահակյան

ՏՈՆԱՎԱՃԱՌ

Գյուղատնտեսական առաջին տոնավաճառը կվերաբացվի հունիսի 6-ին

Հունիսի 6-ին կվերաբացվի Երևան քաղաքի Կայան փողոցի վերին հատվածում գտնվող գյուղատնտեսական մթերքների տոնավաճառը, որը կգործի յուրաքանչյուր շաբաթ և կիրակի օրերին:

Տոնավաճառը կազմակերպվում է ՀՀ գյուղատնտեսության նախարարության նախաձեռնությամբ և Երևանի քաղաքապետարանի աջակցությամբ, որին մասնակցելու են ՀՀ տարբեր մարզերը ներկայացնող գյուղացիական տնտեսություններ՝ սպառողներին ներկայացնելով բացառապես սեփական արտադրանքը:

Գյուղացիական տնտեսությունների մասնակցությունը տոնավաճառներին անվճար է: ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը տոնավաճառների մասնակիցներին անվճար տրամադրելու է նաև հարմարավետ վրաններ, վաճառատեղաններ, կշեռքեր և սայլակներ:

Տոնավաճառն անցկացվում է 2011 թվականից և գյուղատնտեսական մթերք արտադրողների համար տոնավաճառին մասնակցելու պայմաններն անփոփոխ են: Տոնավաճառին միայն սեփական արտադրանքը ներկայացնող գյուղացիական տնտեսությունների մասնակցությունն ապահովելու և միաժամանակ առևտրային միջնորդների մասնակցությունը բացառելու նպատակով, տոնավաճառի կազմակերպիչների կողմից տեղում իրականացվելու է վերահսկողություն: Սահմանվել և հետևողականորեն կիրառվելու են տոնավաճառին մասնակցելու հատուկ ընթացակարգեր. մասնակցությունը տոնավաճառին թույլատրվում է միայն գյուղատնտեսության աջակցության մարզային կենտրոնների (ԳԱՄԿ) կողմից տրված համապատասխան տեղեկանքների առկայության դեպքում, որոնք հավաստում են, որ վաճառքի ներկայացվող ապրանքը տվյալ մասնակցի սեփական արտադրանքն է:

Տոնավաճառի տարածքում հասարակական կարգն ու երթևեկությունը կարգավորելու է ՀՀ ոստիկանությունը: Տոնավաճառի ավարտին կազմակերպվելու են տարածքի մաքրման աշխատանքներ:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ

ՄԵՐՁԱՎԱՆՈՒՄ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԼՈՒԾԵԼԻ ԵՆ

Արմավիրի մարզի Մերձավան համայնքը հիմնադրվել է 1947 թվականին: Մերձավան՝ նշանակում է Երևանին կից մերձակա ավան: Մինչև 1947թ. այստեղ եղել է նաև Երկրագործության ինստիտուտի փորձարարական բազան, այդ հենքի վրա, բանվորական ավանի ստեղծման նպատակով, կառուցվել է ակումբ, բնակելի շենքեր, շինություններ: Այստեղ հիմնադրվել են նաև գիտական հիմնարկներ՝ Բույսերի պաշտպանության և Խաղողագործության, պտղաբուծության և գինեգործության գիտահետազոտական ինստիտուտները: Սկզբնական շրջանում գյուղում բնակվել են վեց ընտանիքներ՝ Կապանից, Ապարանից և Շիրակի դաշտավայրից:

Ներկայումս շուրջ 4000 բնակիչ ունեցող համայնքը ղեկավարում է Լևոն Գրիգորյանը: Նա իր աշխատանքային գործունեությունը սկսել է գիտահետազոտական ինստիտուտում որպես վարորդ, փորձագետ, ապա՝ բազայի տնօրեն: 1996 թ. մինչ օրս հինգ անգամ վերընտրվել է Մերձավան համայնքի ղեկավար և իր ստացած մասնագիտական գիտելիքներն ու աշխատանքային փորձը ծառայեցնում է համայնքի զարգացման ու բնակչության բարորության գործին: 2006 թ. պարգևատրվել է «Անանիա Շիրակացի» մեդալով: Լևոն Գրիգորյանի հետ կայացած զրույցին մասնակցում էր նաև համայնքի ղեկավարի

մակարգում:
-Խմելու ջրի հետ կապված բոլոր հարցերը



գրեթե ամբողջությամբ լուծված են. համայնքը սպասարկում է 3այջրմուղկոյուղին: Նախկինում պոմպերով 2ծամ էինք ջուր մղում համայնքին, իսկ այսօր ջրամատակարարումը 2 ծամով է չի դադարեցվում: Աշխատանքներ են տարվում, որպեսզի առաջիկայում լինի շուրջօրյա ջրամատակարարում: Համայնքում վարելահողերը հիմնականում գտնվում են այն հատվածում, որտեղ ոռոգման ջուր է մղվում պոմպակայանից: Իսկ ամռան շոգ օրերին ոռոգման ջուրը չի բավականացնում. խնդիրը կարգավորելու է Վաղարշապատ ՋՕԸ-ն:

-Ո՞րն է համայնքում հրատապ լուծում պահանջող թիվ մեկ խնդիրը:

-Այս պահին դպրոցի վերանորոգման խնդիրն է քննարկվում: Ճիշտ է, փուլ առ փուլ կատարվել են որոշ աշխատանքներ՝ մարզադահլիճ, տանիք, սանհանգույց, երկրորդ փուլում, կատարվել է շուրջ 50 մլն ներդրում, ձեռք ենք բերել նոր գույք, փոխել ենք պատուհանները, լուծվել է ջեռուցման: Մնացել են պատերի և հատակի վերանորոգման աշխատանքները: Եթե որևէ աջակցության ծրագիր լիներ, մենք էլ մեր հերթին ներդրում կկատարեինք, որ այդ խնդիրը լուծում ստանար և ունենայինք հրաշալի գյուղ: Համայնքում գործող վերանորոգված մանկապարտեզում լավ պայմաններ ենք ստեղծել, որտեղ հաճախում են 105 երեխաներ:

-Ինչպե՞ս է կազմակերպվում երեխաների, պատանիների ու երիտասարդների մարզական, մշակութային առօրյան:

-Համայնքում գործում է վերանորոգված մշակույթի տուն, ֆուտբոլի դաշտ, երեխաների համար բակերում կառուցել ենք խաղահրապարակներ: Մեր ֆուտբոլի թիմը նախորդ տարի Հայաստանի Բ խմբի առաջնությունում, գրավել է առաջին տեղը, իսկ այս տարի Հայաստանի Ա խմբում գրավել է հինգերորդ տեղը, որը ևս դրական արդյունք է: Բնակիչները հպարտությամբ են խոսում համայնքից դուրս եկած և տարբեր մարզաձևերում հաջողության հասած բարձրակարգ մարզիկների մասին:

Դպրոցի մանկավարժական կազմը, աշակերտները սերտ կապերի մեջ են գործառնալի հետ, կազմակերպվում են փոխադարձ այցելություններ:

Մերձավանում Արցախյան ազատամարտում հերոսացած զոհվածների հիշատակը հավերժացնում է 1995թ. կառուցված հուշակոթող: Մերձավան համայնքը 2013թ. ճանաչվել է Արմավիրի մարզի լավագույն համայնք:

ՄԱՆՎԵԼ ԿԻՐԱԿՈՍՅԱՆ



տեղակալ տիկին Արևհատ Եսայանը:

-Պարոն Գրիգորյան, այսօր գյուղատնտեսական նշանակության հողերն ինչպե՞ս են օգտագործվում և ինչո՞վ է զբաղվում համայնքի բնակչությունը:

-Մեր համայնքի վարչական տարածքը 949 հա է: 1991-93 թթ., երբ սկսվեց սեփականաշնորհման գործընթացը, մեր համայնքում այն չիրականացվեց, քանի որ տվյալ տարածքները պատկանում էին գիտահետազոտական ինստիտուտներին: 2003թ. այդ հողերից որոշ հատվածներ հանձնվել են համայնքին, դրանք այն տարածքներն էին, որ ընդհանրապես հնարավոր չէր ոռոգել: 2003 թ. հիմնականում բոլոր վարելահողերը, բացի 8 հա-ից, հանձնվել են համայնքին: Գյուղատնտեսական նշանակության հողերի մեծ մասը վարձակալությամբ տրված է բնակչությանը, և այսօր ունենք շուրջ 145 հա նորատունկ խաղողի, պտղատու հրաշալի այգիներ: Համայնքում գրեթե գործազրկություն չկա, քանի որ բնակիչներն աշխատում են մեզ մոտ գործող հիմնարկ-ձեռնարկություններում՝ քարի արտադրամասերում, քարհանքում, տրիկոտաժի ֆաբրիկայում, մակարոնի արտադրամասում, ունենք շուրջ 25 անհատ ձեռներեցներ:

-Ի՞նչ աշխատանքներ են կատարվել խմելու և ոռոգման ջրերի մատակարարման հա-

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԼՈՒԻԿԻ ՊԱՀԱՆՁԱՐԿԸ ՄԵԾ Է ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ

Հայաստանի ջերմասրճային փորձատարածություններն արտադրում են բարձրորակ, համային հատկանիշներով աչքի ընկնող լոլիկ, որի պահանջարկը մեծ է թե՛ ներքին և, թե՛ արտաքին շուկաներում: «Ջերմասրճային ասոցիացիա» հասարակական կազմակերպության փնտրեն Պողոս Գևորգյանի կարծիքով, արտադրիչի, հատկապես Ռուսաստանի Դաշնության, շուկայում, այն սպառման խնդիր չի կարող ունենալ: «Մնում է պայմաններ ստեղծվեն՝ անհրաժեշտ քանակությամբ արտադրելու և արտաքին շուկայի պահանջարկը բավարարելու համար», - ասում է նա:

«Որպեսզի Հայաստանում արտադրված լոլիկը, ներկրվածի համեմատությամբ, գնային առումով, լինի մրցունակ, պետք է ֆերմերներն արտադրությունում կիրառեն ջերմոցների տաքացման մատչելի եղանակներ, այսինքն՝ գազի գինը պետք է հնարավորինս էժան լինի: Հայաստանի ազգաբնակչության գնադրժանությունն, առանց այդ էլ, ցածր է: Որոշ փոքր ջերմոցներ, չդիմակայելով մրցակցությանը, դուրս են գալիս ասպարեզից»,- նշում է ասոցիացիայի տնօրենը: Ինչ վերաբերում է ջերմոցների տաքացման այլընտրաքային եղանակներին, ապա, ըստ նրա, Հայաստանի ջերմատներից մեկում տեղադրվել է ինֆրակարմիր ճառագայթներով տաքացուցիչ, սակայն, ֆերմերի վկայությամբ, էլեկտրաէներգիայի թանկացումից հետո, այս եղանակը նույնպես ձեռնառու չէ: Պողոս Գևորգյանի կարծիքով, ծախսատար է նաև արևային էներգիայով տաքացուցիչների կիրառումը:



Վերջին տվյալներով, Հայաստանում անկա ջերմոցային տնտեսությունների ընդհանուր մակերեսը կազմում է 250 հա: Հաշվարկները ցույց են տալիս, որ փոքր ջերմոցային տնտեսություններն իրենց չեն արդարացնում: Ծախսերը շատ են, արդյունքը՝ քիչ: «Ջերմատան զբաղեցրած տարածքը առնվազն պետք է լինի 1 հա: Օրինակ, ըստ իսրայելյան և հոլանդական մասնագետների, որպեսզի տնտեսության գործունեությունը լինի արդյունավետ, բանջարեղենի մշակության դեպքում, ջերմատան մակերեսը պետք է առնվազն կազմի 5, իսկ ծաղիկների դեպքում՝ 3 հա: Եթե մակերեսը նշվածից փոքր է, արդյունքն էլ՝ փոքր է լինում», - եզրահանգում է Պողոս Գևորգյանը: Նրա տեղեկացմամբ, Հայաստանում փոքրաթիվ է այն ջերմոցների քանակությունը, որոնց զբաղեցրած մակերեսը հասնում է գոնե 1 հեկտարի, միջինը կազմում է 2000-3000 մ:

Անդրադառնալով ջերմոցային տնտեսությունների նորագույն տեխնոլոգիաներին՝ Պողոս Գևորգյանը նշեց, որ ներկայումս առավել ընդունված է մշակության հիդրոպոնիկ եղանակը, որն աչքի է ընկնում մի շարք առավելություններով. բարձրացնում է բերքատվությունը, ինչը պայմանավորված է բույսի սնուցման ճիշտ կազմակերպումով: Ջերմատներում ապահովվում է նորմալ կլիմայական պայմաններ, պահպանվում են համապատասխան խոնավությունն ու ջերմությունը: Բացի այդ, արտադրվում է ապրանքային տեսքով և համային հատկանիշներով աչքի ընկնող բերք, որը հետագայում արագորեն սպառվում է շուկայում, իսկ տնտեսությունը դառնում է շահութաբեր: «Ջերմատնային ասոցիացիան առաջինը ձեռնամուխ եղավ կաթիլային համակարգի ներդրմանը, ինչին հաջորդեց նաև դրական տեղաշարժը: Եթե մինչ այդ 1մ² տարածքից ստացվում էր 10-12 կգ լոլիկ, ապա, այդ եղանակի կիրառման դեպքում, այն հասնում է 20-25 կգ-ի», - հավելում է պարոն Գևորգյանը:

Հայաստանում այսօր զարգանում են հատկապես բանջարեղեն արտադրող ջերմոցները: Մեր երկրի ջերմատնային բանջարեղենով առավել հետաքրքրված են Ռուսաստանի Դաշնության շուկայում, որին հայկական լոլիկի համը ծանոթ է դեռևս Խորհրդային տարիներից: Մնում է ապահովել պահանջարկի անհրաժեշտ քանակությունը...

Նելլի Սահակյան

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԵՏԱՔՐԲԻՐ Է...

Հայաստանի ազգային ագրարային համալսարանի բազայի վրա գործող Մոսկվայի Կ. Ի. Սկրյաբինի անվան անասնաբուժական բժշկագիտության և կենսատեխնոլոգիայի պետական ակադեմիայի և Ռուսաստանի Կ. Ա Տիմիրյազևի անվան պետական ագրարային համալսարանի Երևանյան մասնաճյուղերը հայտարարում են 2015-2016 ուս. տարվա ընդունելություն:

Ереванские филиалы федеральных государственных бюджетных образовательных учреждений «Российский Государственный аграрный университет им. К. А.Тимирязева» (РГАУ) и «Московская государственная академия ветеринарной медицины и биотехнологии имени К.И.Скрябина» (МГАВМиБ) на базе Национального аграрного университета Армении объявляют прием документов на 2015-2016 учебный год, для очного обучения по следующим направлениям подготовки (специальностям):

Направление подготовки 35.03.06 - Агроинженерия (профиль - Технические системы в агробизнесе), квалификация бакалавр (РГАУ)

Специальность 35.03.01 - Ветеринария, квалификация специалист (МГАВМиБ)

Направление подготовки - Ветеринарная санитарная экспертиза, квалификация бакалавр (МГАВМиБ)

Приемные экзамены для поступления по специальности "Ветеринария" и по направлению подготовки "Ветеринарная санитарная экспертиза" - биология, русский язык и математика, по направлению подготовки "Агроинженерия", профиль "Технические системы в агробизнесе" - математика, физика и русский язык. Сдавшие ЕГЭ (в соответствии с законодательством Российской Федерации) абитуриенты освобождаются от соответствующих вступительных экзаменов.

Обучение проводится на русском языке. Выпускники получают дипломы государственного образца Российской Федерации.

Конкурс проводится на основании результатов вступительных испытаний. При равных условиях учитываются оценки аттестата или диплома среднего специального образования.

Граждане Российской Федерации получают отсрочку от призыва в армию.

При подаче заявления о приеме в период с 20 июня по 25 июля 2015 года абитуриент представляет заявление установленной формы на имя ректора МГАВМиБ и РГАУ с приложением:

- документа о среднем (полном) общем или среднем профессиональном образовании,
- 8 фотографий- размером 3x4 см,
- документа, удостоверяющего личность (паспорт, военный билет, свидетельство о рождении и временно выданный Службой Полиции РА документ, удостоверяющий личность, свидетельство беженца со специальным паспортом РА и справкой о месте жительства),
- документа об отношении к воинской службе (приписное свидетельство или военный билет). От лиц призывного возраста документы принимаются при наличии соответствующей отметки в воинских документах о праве на отсрочку,
- дипломов об участии в международных и республиканских конкурсах (олимпиадах).
Пользующиеся соответствующими льготами абитуриенты прилагают к заявлению:
- документ о потере родительской опеки в возрасте до 23 лет,
- свидетельство о смерти позбишего военнослужащего, документ о полученной инвалидности при прохождении срочной военной службы;
- документ об инвалидности 1-ой и 2-ой группы и прирожденной инвалидности до 18 лет.

Дополнительные сведения можно получить в Национальном аграрном университете Армении.

Адрес: 0009, Ереван, ул.Теряна, 74, 1 учебный корпус, комната 128. телефон:(37410) 52-38-94. Факс:(37410)56-74-11, эл.почта:henrik-s@yandex.com

2015 թվականի հունիսի 19-ին, ժամը 12:00-ին հրավիրվում է Գորիսի «Բերրիություն» բաց բաժնետիրական ընկերության բաժնետերերի արտահերթ ժողով՝ բաժնետերերի համատեղ ներկայությամբ: Ժողովը տեղի կունենա ք. Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3 հասցեում:

Օրակարգում՝ Ընկերության բաժնետերերի ռեեստրի վարումը կազմակերպելու հարցը:

Գորիսի «Բերրիություն» բաց բաժնետիրական ընկերության տնօրեն՝ Տիգրան Ղալեյան:

Կանադական պատրաստուկ՝ Ռամպար

Բույսերի պաշտպանությունը բանջարաբուծության մեջ կարևոր տեղ է զբաղեցնում: Ներկայումս հայաստանյան շուկան լի է առաջարկվող տարբեր չուսումնասիրված պատրաստուկներով, որը բարդացնում է կիրառման նպատակաուղղվածությունն ու ընտրությունը: Կան բազմապիսի պատրաստուկներ, որոնք մրցակցություն են առաջացնում գյուղատնտեսության ոլորտում, ուստի անհրաժեշտ է խորը ուսումնասիրություն կատարել՝ հասկանալու համար, որն է առավել արդյունավետ:

Հայտնի պատրաստուկներից է կանադական արտադրության բարդ պարարտանյութ հանդիսացող Ռամպարտը: Կանադական գործակալությունը փաստաթղթերի դեմ պայքարելու համար հաստատել է «Loveland Products» կոչվող ընկերության կողմից առաջարկվող Rampart Technical և Rampart Fungicide կոչվող սնկասպան պատրաստուկի կիրառման անհրաժեշտությունը գյուղատնտեսության մեջ: Այն իր մեջ պարունակում է ֆոսֆորական թթվի դիկալինային աղեր: Ռամպարտն իր մեջ պարունակում է 0.2% Zn, 0.2% Mn: Այն հանդիսանում է թե՛ կենսախթանիչ, և թե՛ սնկասպան տարբեր հիվանդությունների կանխարգելման, ինչպես նաև վերահսկման համար: Կալիումը, որը պարունակում է պատրաստուկն, անհրաժեշտ է աճեցված մշակաբույսերի իմունային համակարգի ամրապնդման, ինչպես նաև նպաստում է տարբեր հիվանդությունների ներթափանցման կանխարգելմանը: Ցինկն արագացնում է բույսերի աճն ու առողջ բերք ստանալու հնարավորություն է տալիս:

Այն հայտնի է իր բարձր արտադրողականությամբ, իսկ մանգան ակտիվացնում է բույսի ֆերմենտների ռեակցիան, ազդում է պտղի որակի բարելավման վրա, ինչպես նաև ավելացնում է շաքարի պարունակությունը: Տարբեր երկրներում փորձարկվել է Ռամպարտի կիրառման արդյունավետությունը՝ լոլիկի, տաքդեղի, վարունգի և ձմերուկի բրոկոլիի, բրուսեյլան կաղամբի բերքատվության և որակի բարձրացման համար: Փորձերը ցույց են տվել, որ զարգացման

գործընթացներն արագացել են 2-7 օրով՝ կախված մշակաբույսից: Ռամպարտն օժտված է սնկասպան հատկությամբ: Դրա օգտագործմամբ կանխվել են կեղծ այրացող և ֆուզարիոզային թառամում հիվանդությունները: Ռամպարտը նպաստել է տաքդեղի և լոլիկի մշակաբույսերում վիտամին C-ի, չոր նյութերի և շաքարների քանակի ավելացմանը: Ստուգիչի համեմատ, Ռամպարտ պատրաստուկի կիրառման դեպքում, ուսումնասիրվող մշակաբույսերի մոտ 0.5-23.2 %-ով բարձրացել է շահութաբերության մակարդակը:

Կանադայի արևելքում կարտոֆիլի մշակությամբ զբաղվողներն արդեն մի քանի տարի է, ինչ ծանոթ են Ռամպարտ պատրաստուկի արդյունավետությանը: Շոգ



ու խոնավ պայմանները դեռևս 2008թ., առաջացրեցին նոր հիվանդություններ որոնք կործանարար էին բանջարեղենների բերքատվության համար: Այս ամենը պատճառ դարձավ, որ հետագայում Կանադայում ստեղծվեց նոր պատրաստուկը:

«Ռամպարտ պետք է կիրառել ինչքան հնարավոր է շուտ՝ բերքահավաքից առաջ բերքը կործանումից փրկելու համար», - ասել է Ջեֆֆ Քրամփթոնը՝ Loveland products-ի գլխավոր մենեջերը:

Ռամպարտը կիրառում են հետևյալ կերպ՝ 190 մլ ռամպարտ՝ 1լ ջրին. ֆերմերները կարող են կիրառել 2 լ լուծույթ 1000 կգ կարտոֆիլի պալարների համար:

Լիլիթ Գասպարյան

ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

ԱԳՐՈ Երևան

թերթի

2015 թ. ԲԱԺԱՆՈՐԳԱԳՐՈՒԹՅՈՒՆ

«ԱԳՐՈԳԻՏՈՒԹՅՈՒՆ» ամսագրի

1 տարվա գինը՝ 3960 դրամ
6 ամսվանը՝ 1980 դրամ
1 համարինը՝ 120 դրամ

1 տարվա գինը՝ 8100 դրամ
6 ամսվանը՝ 4050 դրամ
1 համարինը՝ 1350 դրամ

Բաժանորդագրությունը իրականացնում են Գյուղատնտեսության աջակցության հանրապետական և մարզային կենտրոնները, «Հայփոստ», «Հայմամուլ», «Պրես-Արտաշես» կազմակերպությունները

ԱԳՐՈ Երևան AGRONEWS

Հասցեն՝ Երևան, Մամիկոնյանց 39ա, հեռ.՝ 23-21-02, ֆաքս՝ 23-03-80
E-mail: asrc@cln.am կայք http://www.asrc.am

ՀԻՄՆԱԳԻՐ ՀՐԱՏԱՐԱԿԻՉ

ՀՀ Գյուղատնտեսության նախարարություն
«Գյուղատնտեսության աջակցության հանրապետական կենտրոն» ՓԲԸ

Տնօրեն

Ա. ՎԱՀԱՆՅԱՆ

Գլխավոր խմբագիր և համարի պատասխանատու՝

Լ. ՇԱՒՆԱՋԱՐՅԱՆ

Տպաքանակ՝ 1100
2 տպագրական մամուլ
գրանցման թիվ՝ 01 Մ 000226
դասիչ՝ 69105
պատվեր թիվ՝ 75
ստորագրված է տպագրության 04.06.2015 թ.
տպագրվում է ԳԱՀԿ տպարանում,
Երևան, Մամիկոնյանց 39ա